ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 19 մայիսի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) արդյունքում 27.02.2025թ. կնքվել է ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08-4 պայմանագիր՝ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ/ՀՎՀՀ՝ 08290479, էլ. փոստ khrimian.emi@gmail.com, (այսուհետ՝ Մասնակից):

08.04.2025թ.-ին օրենքով սահմանված կարգով Մասնակցին ծանուցվել է համաձայնագրի նախագիծը, սակայն Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքնային օրվա ընթացքում 30.04.2025թվականը ներառյալ չի ներկայացվել ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08-4 ծածկագրով պայմանագրի համաձայնագիրը:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը՝ ղեկավարվելով Գնումների մասին» ՀՀ Կառավորության 2017 թվականի մայիս 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով՝ միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի մայիսի 12-ին և Պայմանագիրը մայիսի 13–ի դրությամբ համարվում է լուծված:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ